ՀԱՆԴԷՍ ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ԲՐԷՆՁՈՑ Ի ՉԻՆԱՍՏԱՆ

Չինացիք ամեն ժամանակ մեծ փոյթ ու ջանք ունեցած են ծաղկեցնելու երկրագործութեան արուեստը. և հետևաբար վարձատրած են զերկրագործս, և օգտակար ու պատուաւոր անդամ համարած ընկերութեան, գրեթէ հաւասարապատիւ դնելով զիտնոց ու քրմաց։ Նոյն իսկ կայսրն այս արուեստին մեծ յարգն ու կարևորութիւնը ցուցնելու համար, անձամբ կը բանայ երկրագործութեան եղանակը, որ իբրև որդի երկնից, և միջնորդ ընդ մէջ աստուածութեան ու հպատակացը, երեք օր հանդիսաւորէն կը նուիրէ ինք զինքը պահոց ու աղօթից, և ապա ձեռամբ կը քշէ զարօր, կը պատառէ զերկիր ու կը սերմանէ զբրինձ, ապա հովելով իր անհամար ժողովրդոց կերակուրն ու երջանկութիւնը։ Նոյնը կ'ընեն նաև փոխարքայք ու կուսակալք կայսերութեան ամեն գաւառաց մէջ։

Բայց այսու հանդերձ երկրագործութեան յառաջդիմութիւնն 'ի Չինաստան չափազանց աւանդուած է քան ինչ որ է իրաք։ Չինաց տէրութիւնն ամեն ժամանակ այնպէս հակառակ եղած է օտարաց, որ ինչ և է հնարիւք միշտ արգիլած է մտանել 'ի Չինաստան. ուստի անոնք որ տեղեակ ըլլալով արուեստին՝ կրնային դատաստան մ'ընել, չի կրցան երբէք մուտ գտանել յայն երկիր. իսկ քարոզիչք որ երբէք երբէք բախտ ունեցան հաստատուիլ հոն, իրենց ունեցած գիտութեան չափաւորութեամբը՝ չկրցան ստոյգ տեղեկութիւն մը տալ։

Բայց և ոչ իսկ պէտք է կարծել որ մինչդեռ Եւրոպիոյ ու Ամերիկայ ժողովուրդները կը դիմէին մեծաքայլ 'ի կատարելութիւն, Չինացիք յետամնաց կը մնային. ուստի դիւրին է հետեւցնել թէ ինչպիսի տարբերութիւն պիտի ըլլայ անցեալ ու ներկայ ժամանակաց երկրագործութեան արուեստին մէջ։ Զըկայ տարակոյս որ եթէ բաղդատելու ըլլանք Չինացին յերկրագործականին և 'ի ձեռագործականին հիւսիսային Ասիոյ ու Հնդկաստանի կիսաբարբարոս ազգաց հետ, առաջինը բաղում մասամբ շատ աւելի զարգացեալ ու յառաջադէմ կը գտնանք. իսկ թէ որ Եւրոպիոյ ժողովրդոց հետ բաղդատելու ըլլանք՝ յետամնաց, եթէ յերկրագործութեան և եթէ 'ի ձեռագործ արուեստս։ Եւ յիրաւի. ինչ համեմատութիւն կայ Չինացւոյն եղեղնահիւս նաւակաց՝ որ երբէք չեն հեռանար յափնց, և Եւրոպացւոյն չոգեմուղնաւաց մէջ որ կը հատանեն զալիս Ովկիանու։

digitised by A.R.A.R.@

Զինացւոց գլխաւոր կերակուրը բրբրինձն է, և այս պատճառաւ մեծ փոյթ կը տանին անոր մշակութեանը՝ մանաւանդ 'ի հարաւակողմեան աշխարհս, ուր ջերմ ըլլալով եղանակը, կրնան կրկին անգամ հնձել գրբինձ, 'ի բաց առնելով այն խոշոր տունկերն որ կը մշակուին 'ի ձմեռան։

Գարնան՝ ձմեռուան մշակութեան արդիւնքները ժողովելէն ետքը՝ կ'արօրագրեն երկիրը, և արօրն զոր կը ձգէ եզն կամ գոմէշը, պարզ գործի մ"է, նա մանաւանդ տձև գործի, սակայն մեր արօրներէն աւելի յարմարաւոր է իրենց գործոյն, զորս Զինացիք սաստիկ ծանր կը համարին և ոչ դիւրին 'ի գործածել։ Շատ անգամ անգղիական աբօրներ գրկուեցան 'ի Զինաստան, բայց ընդունելի չեղան. և երբէք չի գործածուեցան 'ի Զինացի երկրագործաց։

Երկիրը արօրագրելէն առաջ աղէկ մը կ'ողողեն, որով արօրին ուրիշ բան չի մնար ընել՝ եթէ ոչ շրջել 18 կամ 20 հարիւրամեգրի թանձրութեամբ տղմի խաւեր։ Գոմէշը որ մեծ յարգ ունի հարաւային գաւառաց մէջ՝ շատ լաւ կը ծառայէ այս տեսակ աշխատութեանց, վասն զի մեծապէս կ'ախորժի տղմուտ տեղուանք։

Արօրէն ետքը կը գործածեն տափան՝ հողակոչները խորտակելու, երկիրը հարթելու ու աղբը ծածկելու համար։ Բայց տափանը մերիններուն նման երկայն ու շիտակ ակռաներ չունի. հողագործն ուզերը վրան դնելով, կը ջանայ մարմնոյն միայն ծանրութեամբը հասնիլ նպատակին։ Այս զանազան տեսակ աշխատութեանց վախճանն է ոչ միայն հողը զրգռել այլ և ջրով յագեցնել. և թէ որ այս կէտին հասնելու ըլլայ, այն ատեն յարմար կը դատուի ընդունելու բրբինձոյ նորաբոյս տունկը։

Բայց այս ամեն բաներէ առաջ փոյթ տարած է հողագործը սերմանելու բրբինձը առանձին աղբատեան հողոյ մէջ, ուսկից կ'առնու ապա վերատնկելու պատրաստուած արտից մէջ. նաև երբեմն սերմանելէն առաջ կը կակղէ բրբինձոյ հատերն տեսակ մը լոյծ աղբի մէջ. բայց այս նախազգուշութիւնը ընդհանուր չէ, միայն հարաւակողմեան գաւառաց մէջ այսպէս կ'ընեն։

Բրբինձոյ նորածիլ տունկերը սերմանուած տեղէն խնամքով հանելէն ետքը, կը տանին լաւ մշակուած արտի մը վրայ, որ ծածկուած է հինգ կամ վեց հարիւրամեգր ջրով, և կը վերատնկեն տեսակ մը փոքրիկ կողովոց մէջ, որ ձևացած են տասը կամ տասուերկու ցօղուններէ, և գրուած իրարմէ 20 կամ 30 հարիւրամեգր հեռաւորութեամբ։ Այս վերատնկութեան գործը կը կատարեն զարմանալի աշխատութեամբ. գործաւորը կ'առնու խուրձ մը տունկերու ու անոնցմով քառակուսի կոյտ մը կը ձևայնէ մէկը գատարկ, և վարժ աչքով կը չափէ մէկէն թէ որչափ արմատ կարիւոր է զանիկա լեցընելու. և ապա անկէ մաս մը ձեռքը առնելով կը հաշուէ տասն առ տասն կամ երկոտասան առ երկոտասան, և աջ ձեռքով կոխելով հողոյն վրայ՝ կը խորտնկցընէ զայն քիչ մը։ Կը քաշէ ձեռքը, և ահա ծակը լեցուած է ջրով, բերելով հետը նաև այնչափ հող, որչափ բաւական է ծածկելու տնկոց նորածիլ արմատները։ Եւ ապա կը յառաջէ գործաւորը նորէն սկսելու նոյն գործողութիւնը, մինչև ամբողջ տնկագործութիւնն աւարտի նոյն կերպով։

Ջերմ գաւառաց մէջ 'ի վերջ յունիս ամսոյ և 'ի սկիզբն յուլիսի, առաջին հունձն արդէն պատրաստ կ'ըլլայ շտեմարանելու չափ։ Բայց դեռ քանի որ բոլորովին հասունցած չեն, բրբինձոյ միւս տունկերն որ սերմանուած են առանձին՝ մեծցած ու պատրաստ կ'ըլլան վերատնկելու մէկէն, երբ յարդարուի արտը։ Եւ այս երկրորդ տնկագործութեան արդիւնքը կը ժողովեն նոյեմբերի մէջ։

Հիւսիսային 30 աստիճանին տակ, ամառը շատ կարճատև է, ուստի անկարելի վերոյհատեալ կերպիւ գործելու, անոր համար երկրագործք տարբեր կերպ մը հնարած են ամառը կը-

digitised by A.R.A.R.@

կին հունձք ունենալու համար։ Ասոնք երկրորդ մշակութեան բրինձը կը տընկին առաջինէն երեք շաբաթ ետքը, զուգահեռական առաջնոյն։ Այսպէսով առաջին անկագործութիւնը որ կը կատարի մայիս ամսոյն մէջ, կը հասունանայ օգոստոսին, յորում երկրորդ գծի տունկերն հասած կ'ըլլան 25 հարիւրամեդրի բարձրութեան. և առաջինը հնձելու ատեն՝ կը գործեն դատարկ մնացած գետինը, հողոյ տակ ծածկելով յարդը իբրև աղբ, սնուցանելու մնացած տունկերը. և այսպէս հարաւայնոց նման նոյեմբերի մէջ կրկին հունձք կ'ունենան։

Բոլոր մայիս ամսոյն մէջ պարբերական առատ անձրևներ կու գայ. և այս շատ օգտակար է մշակին ոչ միայն 'ի մշակութիւն բրընձոյ, այլ և բոլոր ուրիշ անկագործութեանց որ կը կատարուին նոյն եղանակին մէջ։ Զրուցուած է թէ Չինացիք իրենց ամեն գործոցը մէջ մեքենայի պէս ճիշտ ըլլան. բայց քննելով զիրենք 'ի մօտուստ՝ ամենայն ոք կը համոզուի, գոնէ երկրագործութեան նկատմամբ, որ իրենց ամեն գործերը ոչ թէ յերևակայութենէ, այլ 'ի բնութենէ իրին և 'ի բնական օրինաց կարգաւորեալ են։

Եւ ահա այս հիմամբ կը սերմանէ չինացի մշակն անսխալ ամեն տարի մի և նոյն եղանակին բրինձն կամ բամբակը՝ ցած երկիրներ, ու գետնախնձորը բարձր տեղեր. և այս անխոտոր կանոնաւորութիւնը ոչ թէ հին ունակութեան արդիւնք համարելու է, և ոչ կոյր զկուրայն հետևութիւն կարգաց տէրութեան, այլ թէ գիտէ մշակն 'ի փորձոյ՝ որ նոյն եղանակին անձրև պիտի գայ առատօրէն, որ թափանցելով 'ի խորս երկրի, պիտի սնուցանէ բրինձը, ու պիտի պատճառէ մթնոլորտին ախորժելի զովութիւն մը։

Բոլոր բրընձոյ անկագործութեան ժամանակ երկիրը առատօրէն ողողուած է ջրով ըստ չափոյ ընդունակութեան հողոյն. լերանց մօտ երկիրք կ'ընդունին զջուր յաղբերականց լերանց. իսկ դաշտավայրք ջրաբաշխական անուով՝ որուն կիրառութիւնը տարածուած է 'ի բոլոր Չինաստան։ Այս անիւը երեք կերպ է, կամ լաւագոյն ևս ըսելով, նոյն մնալով մեքենական յօրինուածութիւնը՝ երեք տեսակ ուժով կը շարժի. առաջինն է ձեռամբ մարդոյ, երկրորդն ոտիւք և երրորդն ալ կենդանւով, որ ընդհանրապէս գոմէշ է կամ եզն։

Երբ բրընձոյ հասն հասունացած է, կը կտրեն գործիքով մը որ շատ կը նմանի մեր մանգաղին. և շատ անգամ նոյն գետնոյն վրայ կը հարկանեն և երբեմն որայ կապած կը փոխադրեն 'ի համբարանոցս։

ՕՁԱԿԱԼ ԹՌՉՈՒՆ

Կան կենդանիներ զորս կարծես նախախնամութիւնն ստեղծանելու ժամանակ ուրիշ նպատակ չէ ունեցեր, եթէ ոչ որպէս զի հաւասարակշռութիւն պահեն և արգելուն կենդանեաց ոմանց չափազանց աճողութիւնը, որ կրնային վնասակար ըլլալ աշխարհի։ Եգիպտոս անշուշտ յաւեր կը դառնար ու անբնակելի կ'ըլլար 'ի բազմութենէ մկանց, մողիսաց և ուրիշ անհամար տեսակ սողնոց, եթէ չունենար երկու տեսակ կենդանի թշնամի անոնց. որոնք համբաւեալ են 'ի հին ժամանակաց անտի իրենց մատուցած ծառայութիններովը։ Ասոնց առաջինն է իպիս թռչունը նման արագիլի, որ մեծ ջարդ կու տայ օձից, մողիսաց, գորտերու և ուրիշ փոքրիկ կենդանեաց։ Երկրորդն օձամարտ ըսուածը, որ փոքրիկ կենդանի մ'է, և կը ջարդէ ամեն տարի հազարաւոր մըկներ։ Հիները կ'ընծայէին իրեն նաև բնազդումն ջնջելու կոկորդիլոսի հաւկիթները։

digitised by A.R.A.R.@